

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՎԱԾՔԱՅ ԵՒ ԿՆՈՋ ՆՈՐԱՍԱՆԵԹԻ

ԴՐՏԵՐՆ ՊԵՏԱՓՐԷ ԳՐՄԻ ԱՐԵՔ ԳԱՂԱԳԻ

(Տէս Հաւոր ԽԳ. էջ 200)

Եւ եղև իբրև դադարեաց Ասանէթ 'ի խօսելոյ առ Տէր, և արուսեակ ծագեաց. և զաստղն տեսեալ Ասանէթայ՝ ուրախ եղև և Խօսաց. Լուա Տէր աղօթից իմոց, զի ահաւասիկ աստղն՝ որ էր հրեշտակ և քարոյ՝ ծագեաց. դարձեալ տեսեալ Ասանէթ, և ահա մերձ յերկինս պատառեալ լուծանէր երկինք, և երեւցաւ լոյսն մեծ և անճառելի. և զայս տեսեալ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց 'ի վերայ մոխրոյն. և իջեալ յերկնից 'ի նմանութիւն առն, և կացեալ հանգէպ գլխոյն Ասանէթայ, և կոչեաց և ասէ. Ասանէթ. և նա ասէ. Ո՛վ է որ կոչեաց զիս. զի դուք սննեկին փակեալ են, և աշտարակս բարձր է. զիսիդ արգեօք մարթեաց մտանել 'ի սննեակս իմ: Եւ կոչեաց երկրորդ անգամայրն զնա և ասէ. Ասանէթ. և Ասանէթ ասէ՝ եթէ Ո՛վ ես գու՛պատմեալ ինձ. և ասէ այրն. Ես եմ իշխանն Խորայելի, և զօրաւոր քան զամենայն սուրբս Բարձրելոյն. արի կանգնեաց և կաց 'ի վերայ ոտից քոց, և խօսեցայց ընդ քեզ զբանս իմ: Եւ ամբարձ Ասանէթ զգլխոյն իւր, և հոտև, և ահա այրն էր ամենեկին նման Յովակիմայ պատմութեան և պատկան և թաղաւորական գաւազանաւն. բայց զէմք նորա էին որպէս փայլակն և աք նորա որպէս զճառագայթս արեգականն. և հեր գլխոյ նորա իբրև զըսոց, և ձեռք նորա որպէս երկաթ հրացեալ, և կայծակունք թօթափէին 'ի ձեռաց և յոտից նորա իբրև յեռանդանցեալ հրոյ. զոր տեսեալ Ասանէթայ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկին, և երկեալ երկիւղ մեծ և զգողուն հարան ամենայն անդամք ոսկերեաց նորա. և այրն ասէ ցնա. Քաջալերիս, Ասանէթ, և մի երկնչիւր. այլ արի կաց 'ի վերայ ոտից

քոց, և խօսեցայց ընդ քեզ զբանս իմ: Եւ յարեաւ Ասանէթ, և եկաց 'ի վերայ ոտից իւրոց, և ասէ այրն. Երթ և 'ի բաց հան զպատմութեանք քո զայդ՝ սեաւ և սգոյ զոր զգեցար. խորագր՝ որ զմիջովքդ են՝ 'ի բաց զիցես, և 'ի բաց թօթափեալ զմոխրոյդ 'ի գլխոյ բումմէ. և լուա զքեզ ջրով կենդանութեան, և զգեցիր զպատմութեանն անդէկն և փառաւորեալն, և ան զգօտի ոսկի՝ որ է կուսութեան քո. և Եկ խօսեցայց ընդ քեզ զբանս իմ: Եւ փութացաւ Ասանէթ՝ նմուտ յերկրորդ սննեակն իւր, որ էր սապատք զարգու նորա. և բացեալ զարկղըն՝ առ անտի զգետտս կտաւեայս և երկեկիս, որ ոչ էին երեք շաւափեալք յումբէ. և մերկացեալ յինքննէ՝ զստամուճանն սեաւ և սգոյն, և 'ի բաց եհան զխորքըն՝ 'ի միջոյն իւրմէ. և զգեցաւ զհասն գերձն զերկեկիս, և ամեալ զերկոսին զօտիսն, որ էին կուսութեան իւրոց, զմինն ան ընդ մէջ իւր, և զմինն ամաւ 'ի վերայ կրծոց իւրոց՝ հանդէպ ոտեանցն: Եւ 'ի բաց թօթափեաց զմոխիրն 'ի գլխոյ իւրմէ, և լուաց զձեռս և զերեսս իւր, և առ զվարչամակ, և եկաց նոր և պայծառ, և ծածկեաց զգլխոյն իւր. եկն առ այրն յառաջին սննեակն, և եկաց առաջի նորա: Եւ ասէ ցնա այրն. Ի բաց առ զվարչամակդ 'ի գլխոյ բումմէ. ընդէր արարիւր զայդ այսօր. և դու կոյս սուրբ ես և պարկիւտ մինչև ցոյսօր ժամանակի. և զլուսն քո է իբրև զառն երիտասարդի: Եւ եհան Ասանէթ զվարչամակն 'ի գլխոյ իւրմէ. և ասէ ցնա այրն. Քաջալերեաց, Ասանէթ, կոյս սուրբ. ահա լուայ բանից քոց խոստովանութեանն և աղօթիցդ. և ահա տեսի զտառապանս եօթն աւուրց կարօտութեանց քոց. ահաւա

սիկ 'ի միտոյ և յարտասուեաց՝ կաւ սաստիկ տեսանեմ ես առաջի աշաց իմոց. քաջալերեալս, Ասանէթ, կոյս սուրբ, աչա գրեալ է անուն քո մատաւրն Աստուծոյ 'ի գիրն կին. գանեաց յերկինս 'ի սկզբանէ գրելոյն, և յառաջ քան զբազմաց գրեցաւ անուն քո անջինջ յաւիտեանս յաւիտենից: Աչա յայսմ հետէ նորոգեսցիս, վերստին կենդանացիս, և կերիցես զհաց օրհնութեան կենդանարար, և զբաժակ օրհնեալ անմահութեան աբրեցես, և թմամբ անապակտութեամբ ծնցիս. քաջալերեաց Ասանէթ, կոյս սուրբ. աչա ետու գրեալ այսօր Հարան Յովսեփայ յաւիտեանս ժամանակաց: Եւ անուն քո ոչ ևս կոչեսցի Ասանէթ, այլ կոչեսցի Քաջալերեալս. վասն զի 'ի քեզ ապաւինին աղգք բազում 'ի Տէր Աստուածն երկնից: Եւ ընդ հովանեալ քո ծածկեսցին յուսացեալք 'ի տէր Աստուած, և ընդ պարսպաւ քո պարսպեսցին Հնազանդեալք Բարձրելոյն՝ անուամբ ապաշխարութեան. հանէ մերձ յերկինս, իբրև զսրելի Բարձրելոյն առնէ զմարդն, որ զնա կատարեալ մտօք խնդրեսցէ. զի նա է տուիչ ամենայն պարգեաց, և զօրացուցիչ ամենայն կուսանաց, և խնդրէ գիւտութիւն և սիրէ յոյժ, և 'ի վերայ ակն ածէ յոյժ յամենայն ժամ, և զամենեւեմ որ եթէ ապաշխարեն՝ առ ինքն 'ի յարին իւր ընդունի, և տեղի հանդ զլստեան պատարաստէ նոցա յերկինս, և հանգուցանէ զամենայն ապաշխարողս. ընդ այցելութեամբ նորա եղիցին Հանապաղ յաւիտեանս ժամանակաց, և նա խնայեսցէ 'ի նոսա: Եւ ես ահաւասիկ երթամ առ Յովսեփ, և խօսեցայ ընդ նմա վասն քո զամենայն բանս իմ: Եւ մտցէ առ քեզ Յովսեփ այսօր, և ուրախ եղիցի վասն քո, և սիրեցէ զքեզ. և եղիցի քեզ 'ի անսպաւթեան, և զու եղիցես նմա 'ի Հարսնութեան յաւիտեանս: Եւ արգլուք ինձ, Ասանէթ կոյս, և զգեցիր զպատուաճան Հարսնութեան քո, որ 'ի սկզբանէ պատրաստեալ է քեզ. և ամենայն զարդիւք կարգեալ և պաճուճեալ զքեզ իբրև Հարսն բարի, և յարուցեալ գնացես 'ի պատահումն Յովսեփայ, վասն զի նա աչա այսօր եկեսցէ առ քեզ — Եւ եղև իբրև կատարեաց այրն զխօսսն, խնդաց Ասանէթ 'ի խնդութիւն մեծ 'ի վերայ ամենայն բանից նորա, և անկեալ 'ի վերայ ոտից նորա՝ Եւ

կիր եպագ նմա 'ի վերայ երեսաց, և ստէ. Օրհնեալ է Աստուած բարձրեալն, որ առաքեաց քեզ և իրկեաց զիս 'ի խաւարէս յայտնանէ և վերածեաց 'ի հիմանց անդրնդոց, և օրհնեալ է անուն քո յաւիտեանս: Եւ առա՛ գինչ է անուն քո, Տէր. պատմեա ինձ, զի օրհնեցից քեզ, Տէր, յաւիտեանս ժամանակաց: Ասէ ցնա այրն. Իմ անունս յերկինս է 'ի գիրն Բարձրելոյն. զբեալէ յաւիտեանս ժամանակաց մատաւրըն Աստուծոյ 'ի սկզբանէ գրելոցն յառաջ քան զամենեցունց, վասն զի ես եմ իսկաւ Բարձրելոյն. և ամենայն անուանք՝ որ եթէ գրեալ են 'ի գիրս Բարձրելոյն, անգնելի են, և մարգոյ ոչ է լսելի և ոչ տեսանելի յայսմ աշխարհիս. վասն զի մեծ են անուանք նոցա և սքանչելի և գովեալք յոյժ: Եւ Ասանէթ ստէ. Գտի չորհս առաջի քո, և գիտեմ զամենայն բանս զոր խօսեցար ընդ իս. բայց սակայն խօսեսցի աղախին քո առաջի քո. և նա ստէ. Խօսեսց: Եւ ստէ Ասանէթ. Աղաչեմ զքեզ, Տէր. և ընդ ասելն՝ մերձեցաւ ձեռն իւր 'ի ծոռկս նորա, և պաղատելով ստէր ցնա. Նիստ փոքր մի 'ի վերայ տախտիս այսմիկ. վասն զի տախտս այս մաքուր է և առանց պղծութեան, և այր և կին ոչ երբեք նստեալ է 'ի վերայ նորա. Եւ եղից առաջի քո սեղան, և բերից շտեմարանաց հաց և գինի հին և անոյշ, և գու կերիցես և արբես, և ասաւ երթիցես զճանապարհն քո: Եւ ստէ ցնա այրն. Փութացիր և բեր: Եւ փութացաւ Ասանէթ, և երբ առաջի նորա սեղան ունայն, և ինքն զնսցեալ յերեսաց նորա, և կամէր մտանել յշտեմարանս իւր, զի բերցէ և զնիցէ առաջի նորա հաց: Ասէ ցնա. Ինք ինձ խորիսիս մեղու. և զտեղի առեալ Ասանէթ՝ տրտմեցաւ. վասն զի ոչ ունէր խորիսիս մեղու յշտեմարանս իւր: Ասէ այրն. Ընդէր զտեղի առեալ տրտմեցար: Եւ ստէ Ասանէթ. Առաքեսցի մահուկ տրտալ քաղաքիս, վասն զի մերձ է այսր ժառանգութիւնս մեր, և բերցէ անտի վաղվաղակի խորիսիս մեղուցան, և եղից առաջի քո, տէր իմ: Ասէ ցնա այրն. Գնացեալ մտցես յշտեմարանս քո, և գտցես խորիսիս մեղուաց 'ի վերայ սեղանոյն, զոր առեալ բերցես այսր: Ասէ այրն. Երբ մուտ, և գտցես, Եւ նմուտ Ասանէթ յշտեմարանս իւր, և եպիտ մաղս մեղուաց՝ որ կայր 'ի

վերայ սեղանոյն, և էր մաղն մեծ և սպիտակ իբրև զծիւն, լի մեղու. և էր մաղն որպէս զցօզ երկնից, և հոտոտորա որպէս զհոտ կինդաւանութեան, էւ զարմացաւ Ասանէթ, և զմտաւ ամէր թէ 'ի բերանոյ անոն այսուրիկ ել արդեօք խորիսխ այս. վասն զի հոտ նորա իբրև զհոտ առնս այսորիկ է: Եւ առ Ասանէթ զխորիսխն զայն, և երբ ատաջի առն, և նզ 'ի վերայ ունայն սեղանոյն, զոր պատրաստեաց յառաջագոյն: Ասէ ցնտ այրն. Ձի' է' որ ստացեր թէ ոչ գոյ խորիսխ մեղու յշտմարանաց իմոց. և արդ բերաւ աւաղիկ խորիսխ մեղուաց յշտմարանացդ սքանչելապէս: Եւ զորհուրեալ Ասանէթ ասաց. Ես, աէր, խորիսխ մեղուաց ոչ ունէի յշտմարանս իմ. բայց դու խօսեցար, և նզեք գուցէ 'ի բերանոյ քումմէ ելեալ է սա. վասն զի հոտ սորա իբրև զհոտ բերանոյ քո է: Եւ ժպտեալ առն՝ զմտաւ ամէր զԱսանէթայ զգաստութիւնն. Եւ կռչեաց զնա առ ինքն և մերձեցոց զալ ձեռն 'ի գլուխ նորա. և երկեալ Ասանէթ 'ի ձեռանէ առն. վասն զի կայծակունք թափէին 'ի բերանոյ առ նորա իբրև յերկաթոյ եռանդնացելոյ: Եւ զարհուրեալ Ասանէթ՝ պշուցեալ հայէր 'ի ձեռն առն: Եւ տեսեալ ժպտելով ասէր. Երանի է քեզ, Ասանէթ, զի յայտնեցան քեզ ծածուկէն Աստուծոյ բարձրելոյն. և երանի ամենեցուն՝ որ կացնես առաջի Տեառն ապաշխարութեամբ, զի 'ի խորիսխոյ յայսմանէ կերիցին. վասն զի այս խորիսխս շուռչ կենդանութեան է. և զսա գործեցին մեղուք դրախտին փափկութեան, այսինքն 'ի ցօղոյ վարդենեաց կենդանութեան. վասն զի ամենայն հրեշտակքն 'ի սմանէ ճաշակեցան, և ամենայն որդիք Բարձրելոյն, և ընտիրքն Աստուծոյ. զի խորիսխ կենդանութեան է սա. և ամենայն ոք որ կերիցէ 'ի սմանէ՝ ոչ մեղի յաւիտեանս ժամանակաց: Եւ ձգեաց այրն զձեռն և երեկ 'ի խորիսխն մասն ինչ սակաւ և կերաւ ինքն և զմնացորդսն որ 'ի ձեռնն՝ արկ 'ի բերան իմ, և ասէ ցիս. Ասանէթ, ահա կերար հայ կինոց, և արբեր ռաժակ անմաշութեան, և օծար օծմամբ անապականաւ. ահա յայսմէնէ մարմին քո բողբոջեաց որպէս ծաղիկ և հանցէ կրկին որպէս յերկէ Բարձրելոյն, և ոսկերք քո պարարտացին որպէս զմայրս փափկութեան դրախտին Աստուծոյ, և զօրութիւնք

անախատք պարփակեցն դքեզ, և մանկութիւն քո զծերութիւն ոչ տեսցէ, և զեղեցկութիւնդ քո յաւիտեան ոչ ոսկաւ սեսցին. և կողիցի քաղաք ամենեցուն որպէս պարսպեալ են՝ յանուն տեսուն Աստուծոյ թաղաւորին յաւիտեանից: Եւ ձգեաց այրն զձեռն իւր, և մերձեցոց 'ի խորիսխն յոր բեկնեալն էր. և անդէն կտտարեալ առցաւ բեկուածն և անդէն եղև ողջ որպէս էր յառաջագոյն: Եւ դարձեալ ձգեաց զալ ձեռն իւր և զմատն իւր ցուցական, և մերձեցոց յեզր խորիսխն՝ որ հայէր ընդ յարեւելս, և ամ 'ի կողմն՝ որ հայէր ընդ յարեւմտս. և եղև տեսիլ մատին նորա որպէս զարիւն. և ձգեաց երկրորդ անգամ ձեռն իւր, և մերձեցոց յեզր խորիսխն՝ որ հայէր ընդ հիւսիսի, և ամ 'ի կողմն՝ որ հայէր ընդ հարաւ. և տեսիլ մատին նորա որպէս զարիւն: Եւ Ասանէթ հայէր և տեսանէր՝ զոր ինչ առնէր այրն: Եւ ասէ այրն ցխորիսխ մեղուաց. Ել այսոր. Եւ համարաձան մեղուքն յարկաց մաղին այնորիկ, բիրք բիրոց և հազարք հազարաց մեղուք՝ սպիտակ իբրև զծիւն, լի մեղուք. և թեք նոցա ծիրանիք երկայնագոյնք որպէս զօրդան կարմիր, և ոմանց քրպէս բնՀեզա ընդեւելեալս, և զօրէն ոսկեղէն պսակաց շուրջ զգլխովն իւրեանց. պատուական էին կերպարանօք, և խայթոց էին նոցա սուրբ, և ոչ ումեք փեսսէին. և շուրջ պատեալ ամենայն մեղուքն զԱսանէթաւ՝ ռոտին մինչև ցլուխն: Եւ այս մեղուքս ընտիրք էին և մեծամեծք որպէս զթագունհիւր. և յարուցեալ յերեսաց մաղին՝ պատեղան զերեսօքն Ասանէթայ, և զգործեցին զերեսօքն նոքա զօրծ, և շրթունք խորիսխն՝ էր 'ի բերանն Ասանէթայ: Եւ ասէ այրն ցմեղուսն. Երթայք իւրաքանչիւր 'ի տեղի իւր: Եւ յարեան ամենայն մեղուքն և թռեան, և չոգան հանդէպ երկնից, և որք կամեցան փեսսել Ասանէթայ՝ անկան և մեռան: Եւ ձգեալ այրն զգաւապանն 'ի մեղուսն մեռեալ, և ասէ ցնոսա. Արիք և դուք երթալ 'ի տեղիս: Եւ յարեան ամենալ մեղուքն և նստան 'ի վերայ ծառոց պտղաբերաց: Եւ ասէ այրն ցԱսանէթ. Իմացիր զտեսիլդ: Եւ նա ասէ. Իմացայ: Եւ ասէ այրն. Այսպէս կողիցի քեզ բանք իմ այսօր: Եւ ձգեաց երրորդ անգամ զալ ձեռն իւր, և հասոց 'ի

հատուածս խորսխին, և եկեր զխորսխս, և սեղանն ոչ վնասեցաւ, և հոռ հատուածի խորսխին՝ կլից զսենեակն. և էր հոռ յոյժ հեշտայի, Եւ ասէ Ասանէթ ցայրն. Են առ իս եօթն կուսանք սննդակիցք իմ. 'ի միում գիշերի ծնեալք են և նոքա. և ես սիրեմ զնոսա որպէս զբոյր իմ. կոչեցից աստ՝ զի օրհնեցես զնոսա, որպէս և օրհնեցեր զիս: Եւ ասէ այրն. Կոչեա, Եւ կոչեցեալ կացոյց զնոսա առաջի առնն. և ասէ ցնոսա այրն. Սրհնեցէ գնեզ տէր Աստուած բարձրեալն. եղիջիք սինք եօթն թաղաքի, և 'ի ձեր վերայ հանգիցէ օրհնութիւն Տնառն յախտեանս ժամանակաց: Եւ ասէ ցԱսանէթ. Փոխեա 'ի բաց զսեղանդ 'ի տեղւոյդ: Եւ Ասանէթ էառ զսեղանն 'ի տեղւոյն և գարձաւ 'ի միւս կողմն, զի ցիցէ զսեղանն 'ի տեղին իւր. և այրն աներևոյթ եղև Ասանէթոյ, Եւ ետես Ասանէթ որպէս կառս՝ զի գնային յարեհել յերկինս. և կարօքն էին որպէս զշուր, և ձիք նորա որպէս փայլակն, և այրն այն կայր 'ի վերայ կառացն այնորիկ: Եւ ասէ Ասանէթ. Անմիտ յանգուգնս, զի խօսեցոյ համարձակութեամբ և ասացի՝ Թէ մարդ եկն 'ի սենեակս իմ, և ոչ գիտացի Թէ հրեշտակ Տնառն եկն այսօր յերկնից առ իս. և ահա զնաց 'ի տեղի իւր: Եւ ասէ. Քաւեա զիս, Տէր իմ, և խնայեա յաղախին քո. վասն զի խօսեցոյ առաջի քո յանդգնարամ անդգամութեամբ զամենայն զրանս իմ: Եւ մինչդեռ զմտաւ ամէր Ասանէթ վասն այսորիկ, և ահա մանուկ մի ընթացեալ 'ի սպասարարացն Պետափրեայ, և ասէ. Ահա Յովսէփ զօրուորն Աստուծոյ գայ առ մեզ. զի կառքն առաջի գաւթիս է: Եւ փութացաւ Ասանէթ և կոչեալ զգայեակն իւր՝ որ էր 'ի վերայ ամենայն ստացուածոցն, և ասէ. Փութիւ և կազմեա զտաճարն, և արա ընթրիս ազնիւս վասն Յովսէփայ զօրուորին Աստուծոյ, որ գայ այսօր: Եւ տեսեալ զնա գայեակ իւր, և ահա 'ի վայր անկեալ էին երեսք նորա 'ի կարօտութենէ կերակրոց եօթն աւուրցն. և տրտմեցաւ յոյժ, և ելաց. և կալաւ զաջոյ ձեռանէ նորա, և համբուրեաց զնա, և ասէ. Չի ես, որդեակ, զի այսպիսի վայր անկեալ են երեսք քո: Ասէ Ասանէթ. Բաւ ծանր անկաւ զգլխով իմով, և քուն հատաւ յաչաց խնց. վասն այնորիկ վատեալ են երեսք իմ: Եւ չոգաւ դա-

յեակ նորա և պատրաստեաց զտաճարն, և կազմեաց զընթրիսն: Եւ յիշեաց զայրն և զպատուիրանս նորա. և փութացեալ եմուտ 'ի սենեակն իւր երկրորդ, ուր էին սապառք զարդուց նորա. և բացեալ զարկըն մեծ, և հհան զագանեկոսն իւր հարսնութեան զառաջինն և զընտրին՝ իրրե գիւայլակն, և զգեցաւ զնա. և ամառ զգօտին ոսկի և զթագաւորական, որ էր բեւեռք յօրինեալ ազգի ազգի. և 'ի ձեռս և 'ի յոտս իւր ագաւ ապարանջանս ոսկի, և զարդու պատուականք զարդարեաց զպարտանոց իւր, յորում էին սկուռք պատուականք յեղյեղեայք անհամարք և բիրք. և պսակ ոսկի եզեալ 'ի վերայ գլխոյ նորա. և էր պսակին աջոյ կողմանէն՝ հանդէպ ճակատոյ՝ ակնակուռք մեծ աստի և անտի, վեց սկուռք պատուականք և մեծազինք. և ամարանոց արկեալ զգլուխ իւր՝ որպէս ըզհարսն. և առ զգաւազանն թագաւորական 'ի ձեռին իրում: Եւ յիշեաց Ասանէթ զբանս գայեակն իւրոյ, որ ասաց նմա՝ Թէ տրտմեալ են երեսք քո. յոգւոյց եհան և տրտմեցաւ յոյժ, և ասաց. Եթէ դէմք իմ վատեալք են, եթէ տեսանիցէ զիս Յովսէփ՝ արհամարհէ զիս: Եւ ասէ ցաննգակիցս իւր. Ինք ինձ յատակ յաղբերէն և լուացից զերեսս իմ: Իւ բերեալ արկ 'ի դաշխութեան, և խոնձրեհեալ Ասանէթ՝ զի լուացեց զերեսս իւր. և տեսեալ զգէմն իւր 'ի ջուրն՝ զի էին որպէս զարեգակն, և աչք նորա որպէս զարուսեակ զի ծագէ, և զնայք ոտից նորա որպէս զսիօսս հարթ և գեղեցիկս. այսք նորա կարմիր որպէս հատորս նռան, և շրթունք իւր որպէս զվարդ փթթեալ յորժամ 'ի հակուկացն 'ի գուրս վազէ, ատաւմունք նորա որպէս զաշտարակ գեղեցիկ: Եւ այսպէս տեսեալ Ասանէթ զինքն 'ի ջուրն, և ուրախացաւ ուրախութիւն մեծ, և ոչ ևս լուաց զերեսս իւր: Եւ եկեալ դայեակն 'ի պատմել նմա վասն ամենայնի՝ զոր ինչ հրամայեաց նմա. և եղև իրրե ետես զնա՝ հիացաւ և եկաց յափշտակեալ իւրե ժամս երկուս. և երկեալ երկիւզ մեծ 'ի տեսնէն նորա, և խոնարհեալ յոտս նորա, ասէ. Չինչ է այս, տիկին իմ, և կամ ուստի՞ է այդ մեծ գեղեցկութիւնդ քո, սքանչելի և հրաշալի. կարծեմք տէր Աստուածն երկնից ընտրեաց զքեզ 'ի հարսնութիւն Յովսէփոյ: Եւ մինչդեռ խօսէին

ահա եհա սկի մանուկ մի, և սաէ ցՍտանէթ. Ահաւասիկ Յովսէփ առ դուռն գաւթիս է: Եւ փութացեալ Ասանէթ՝ էջ ընդ սանդուխան եօթն կուսանօք ՚ի պատահումն Յովսեփայ. և եկաց ՚ի փողոցս յապարտիցն: Եւ հմուտ Յովսէփ ՚ի գաւթին, և փակեցան դուռքն, և արտաքոյ մնացին ամենայն օտարականքն: Ասանէթ ել ՚ի փողոցն ՚ի պատահումն Յովսեփայ: Եւ տեսնալ զնա Յովսէփ, և զարհուրեցաւ վասն յոյժ զկեղեցկութեան նորա, և սաէ. Ո՛վ ես դու, պատմեալ ինձ վաղվադակի: Եւ նա աւսէ. Ես եմ աղախին քո Ասանէթ, որ ըստ հրամանի քում զամենայն զկուսան ՚ի բաց ընկեցի և կորուսի. և այր ոմն եկն այսօր ետ ինձ հաց կենաց, կերոյ. և բաժակ օրհնութեան արբի. և սաէ ցիս. Ահա ետու գրեզ հարան Յովսեփայ, և նա եղիցի քեզ փեսայ յաւիտեանս ժամանակաց. այլ նա սասց ցիս՝ Թէ ոչ ես կոչեցուի Ասանէթ, այլ Քաղաք Ալալինի. վասն զի քե աղախնեացին աղգք բազումք ՚ի տէր Աստուած բարձրելոյն. և առաց ցիս. Գնացից առ Յովսէփ և խօսեցայց յականջս նորա գրանս իմ վասն քո: Եւ այժմ՝ դու ճանաչեցայ, տէր իմ, և թէ եկն այրն այն առ քեզ և խօսեցաւ ընդ քեզ գրանս իմ: Եւ սաէ Յովսէփ ցՍտանէթ. Օրհնեալ ես դու ՚ի տեսանէ Աստուծոյ բարձրելոյն. վասն զի տէր Աստուած հիմնաւորեաց զապրիսայ քո անդաւմանդեայ՝ պարիսպ կենդանութեան. վասն զի բազումք կենդանիք որդիք մարդկան բնակեցան ՚ի Քաղաքից Ալալինի, և տէր Աստուած թագաւորեաց նոցա յաւիտեանս ժամանակաց. զի այրն այն եկն այսօր առ իս, և ըստ բանիցս այսօցիկ խօսեցաւ վասն քո: Այժմ եկ առ իս, կոյս սուրբ. և ընդհի կացիր հետի յինէն: — Եւ ամբարձ զձեռն իւր, և կոչեաց զԱսանէթ. և եկն առ Յովսէփ, և անկաւ ՚ի վերայ գրիաց նորա. և կենդանացան հողիքն նոցա, և լցան ուրախութեամբ: Եւ ողջունեալ Յովսէփ ցԱսանէթ, ետ նմա հոգի կենդանութեան և հոգի իմաստութեան և հոգի ճշմարտութեան. և շաղտաւտեալք ընդ միմեանս՝ բազում ժամս զուարճանայիս ընդ իրարս: Եւ սաէ Ասանէթ. Ե՛կ այսր, տէր իմ, և մեւտ ՚ի տունս մեր. զի և ես պատրաստեցի զտաճարս մեր, և կազմեցի ընթրիս մեծամեծս: Եւ կաշնալ զձեռանէ նորա՝ արկ ՚ի

տունն, և նստոյց յաթոռ հօր իւրոյ և երբ ջուր՝ զի լուսացէ զօտս նորա: Եւ սաէ Յովսէփ. Եկեցէ մին ՚ի կուսանացն և լուսացէ զօտս իմ: Ասէ Ասանէթ՝ Թէ Ոչ այդպէս, տէր իմ. յայսմ՝ հետէ ես եմ աղախին քո. և ընդհի է քեզ ոյգ, զի այլ որ լուսացէ զօտս քո. վասն զի ոտք քո՝ ոտք իմ են, և անձն քո՝ անձն իմ. և բռնապատեաց ըզնա և լուսաց զօտս նորա: Եւ տեսանէր Յովսէփ ՚ի ահա ձեռք նորա էին որպէս զձեռս կենդանութեան, և մատուներ նորա էին որպէս զբիշ արագազրի: Եւ զինի այսորիկ և կոլաւ զաջոյ ձեռանէ նորա, և համբուրեաց զնա Ասանէթ, և համբուրեաց ըզգլուխ նորա. և նստաւ ընդ աջմէ նորա: Եւ եկին հայր և մայր նորա յազարակէ իւրեանց, և ամենայն աղգակներս նորա. և տեսին զԱսանէթ որպէս ՚ի տեսնան լուսոյ, և էր զեղեցկութիւն նորա որպէս ըզգեղեցկութիւնս երկնայինս. և տեսին զնա զի նստէր ընդ Յովսեփայ, և զգեցեալ էր հանդերձ հարսանեաց. և զարհուրեցան և սրանչացան վասն զեղեցկութեան նորա, և ետուն փառս Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն: — Եւ զինի այսոցիկ՝ կերան և արբին և ուրախ եղին. և սաէ Պետափրէս ցՅովսէփ. Ի վաղիւն կոչեցես զնախարարս և զմեծամեծս Եգիպտացոց, և արարից ձեզ հարսանիս, և առցես զգուտոր իմ զԱսանէթ քեզ ՚ի կնութիւն: Եւ սաէ Յովսէփ. Ոչ այդպէս. այլ վաղիւն զնացից առ Փարաւոն արքայ, վասն զի նա է որպէս զհայր, և կարգեաց զիս իշխան ՚ի վերայ երկրի. և խօսեցայց վասն Ասանէթայ յահանջս նորա, և նա տացէ Ասանէթ ինձ ՚ի կնութիւն: Եւ սաէ Պետափրէս. Ե՛րթ ՚ի խաղաղութիւն, Եւ մնացեալ Յովսէփ զօրն զայն առ Պետափրէս. բայց ոչ ննջեաց ընդ Ասանէթայ. վասն զի աւեր Յովսէփ՝ Թէ ոչ վայելէ առն աստուածապաշտի նախ քան զհարսանիսն՝ ննջլ ընդ ամուսնոյ իւրոյ: Եւ յարեաւ ընդ առաւօտն Յովսէփ, և շագաւ առ Փարաւոն, և սաէ ցիս. Գուր ինձ զԱսանէթ դուտոր Պետափրէ քրմի ՚ի կնութեան, յԱրեգ քաղաքէն: Եւ սաէ Փարաւոն. Ո՛չ ահա զնա խօսեալ էր քեզ ՚ի հարսնութիւն յայսմ՝ հետէ յաւիտեանս ժամանակաց, Եւ առաքեաց Փարաւոն, և կոչեաց զՊետափրէս: Եւ ած զԱսանէթ և կացոյց առաջի Փարաւոնի. և հիացաւ Փա

բաւոն ընդ գեղեցկութիւն նորա, և ասէ. Որհնեսցէ զբեղ Աստուածն Յովսեփայ, որ-
ցեակ. և մնացէ 'ի քեզ գեղեցկութիւն
քո յաւիտեանս յաւիտենից. զի յիրաւի
ընտրեաց տէր Հարոն Յովսեփայ յաւի-
տեանս Աստուծոյ. վասն զի սա է որպէս
գորդի Աստուծոյ, և գու Կոչեսցին յայմ.
Հետէ գուսար Բարձրելոյն: Եւ առ Փարա-
ւոն զՅովսէփ և զԱսանէթ, և եղ նոցա սը-
սակս ոսկիս, որ էր 'ի տան զանձուց յա-
ւիտեանս ժամանակաց: Կացոյց Փարաւոն
զԱսանէթ յաջմէ Յովսեփայ, և եղ զձեռս
'ի վերայ զլիւնջ նորա և զալ ձեռն 'ի վերայ
զլիւնջ Ասանէթայ, և ասէ. Որհնեսցէ ըղ-
բեղ Աստուած բարձրելոյն, և փառաւո-

րեսցէ զբեղ յաւիտեանս ժամանակաց: Եւ
գործոյց զնոսա Փարաւոն յիրեարս, և մեր-
ձեցոյց զնոսա, և Համբուրեցին զմիմեանս:
Եւ զինի այսորիկ արար Փարաւոն Հարսա-
նիս և ընթրիս մեծամեծս և ուրախու-
թիւնս բազումս՝ աւուրս հօթն: Եւ Կոչեաց
զամենայն իշխանս Եգիպտացոյցն և զթա-
գաւորս ազգաց: Եւ քարոզ կարգայր ա-
մենայն երկրին Եգիպտացոց, և ասէր. Ա-
մենայն ոք որ գործէ զգործ զհօթն օր Հար-
սանեաց Յովսեփոյ և Ասանէթայ՝ մահու
մեռցի. — Եւ եղև յետ այսորիկ՝ եմուտ Յով-
սէփ առ Ասանէթ, և յղացաւ, և ծնաւ
զԱմնասէ 'ի տուն Յովսեփայ, 'ի փառս Աս-
տուծոյ. ամէն:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՍԱՆԵԹԱՅ ԱՌ ԱՍՏՈՒԱՅ

- Ա. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բա-
զում յանցեայ, ես Ասանէթ, գուսար Պե-
տափրեայ քրմի Արեգ քաղաքի, որ վե-
րակացուն էր աստուածոցն ամենայնի:
- Բ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո, և յան-
ցեայ, և պաշտեցի զաստուածսն, որոց
ոչ գոյ թիւ, և ուտէի 'ի զոհից նոցա:
- Գ. Մեղայ, Տէր, մեղայ և յանցեայ. ես
էի կոյս Հպարտ և ամբարտաւան:
- Դ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բա-
զում յանցեայ. գհաց Հեղձուցիկ կերայ
և զբոժակ յորդացիքից արբի, և ու-
տէի 'ի սեղանոյն մահու:
- Ե. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բա-
զում յանցեայ, և ոչ գիտէի զտէր Աւ-
տուած երկնից, և ոչ յուսացայ 'ի բար-
ձրելոյն Աստուած 'ի կենդանին յաւի-
տենից:
- Զ. Մեղայ, Տէր, մեղայ և բազում յան-
ցեայ. և յուսացայ 'ի մեծութիւն փա-
ռաց իմոց և 'ի գեղեցկութիւն, և էի
Հպարտ և ամբարտաւան:
- Է. Մեղայ, Տէր, մեղայ, և առաջի քո բա-
զում յանցեայ, արհամարհելով զամե-
նայն մարդով, և ոչ էր այր՝ որ երևէր
առաջի իմ:

- Ը. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո. յան-
ցեայ, բազում յանցեայ. զի ասէի՝ ոչ
գոյ իշխան երկրի՝ որ լուծանէ զգօտի
կուսութեան իմոյ:
- Թ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բա-
զում յանցեայ. և ատեցի զամենեւին,
որք կամէին զիս 'ի Հարսնութիւն, և
արհամարհէի զնոսա և անգոսնէի:
- Ժ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բա-
զում յանցեայ. այլ զթութեամբ քո և
ղէց Հարսն որդւոյ մեծի թագաւորի.
այլ արա ինձ թողութիւն: Մինչ կին զօ-
րաւորն Աստուծոյ Յովսէփ, նա ինքն
իջոյց զիս 'ի զօրութենէ իմմէ, և խո-
նարհեցոյց զիս յամբարտաւանութիւնէ
իմմէ, և գեղեցկութեամբ իւրով որսաց
զիս, իմաստութեամբն իւրով՝ որպէս
ձուկն թակարդիւ՝ կալաւ զիս: Եւ Հո-
գւով զեղ կենաց արբոյց ինձ, և զօ-
րութեամբ իւրով Հաստատեաց զիս, և
մատոյց զիս Աստուծոյ յաւիտենից, և
ետ ուտել ինձ Հաց կենաց և ըմպել
զբոժակ անմահութեան. արբոյց ինձ,
և եղէ նմա Հարսն յաւիտեանս: — Եւ
յետ այսորիկ և անցին հօթն ամ իլու-
թեան, և սկսաւ զալ հօթն ամ սովոյն:

ՎԱՍՆ ԳԱՂՈՅՆ ՑԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆՈՅՆ ԸՆՏԱՆԵՐԻ ԵՒ ԲՆԱԿԵԼՈՅՆ

Ի ԳԵՍԵՄ

Եւ լուաւ Յակոբ վասն Յովսէփայ որդւոյ իւրոյ, և եկն յԵգիպտոս ամենայն ազգա-
կանօք իւրովք յերկրորդ ամի ամովոյն, յեր-
կրորդ ամսեան նիսանի ԻԱ ամսոյն և բնա-
կեցաւ յերկրին Գեսեմ: Եւ ասէ Ասանէթ
ցՅովսէփ: Երթամ տեսանեմ զհայրն քո,
վասն զի հայրն քո Յակոբ որպէս Աստուած
է իմ: Եւ Յովսէփ: Եկեացես ընդ իս, և
տեսցես զհայր իմ: Եւ եկին Յովսէփ և Ա-
սանէթ յերկրին Գեսեմ: և սլատուհեցան
նմա իղբարբն Յովսէփայ, երկիրապահին
նմա, մանաւանդ Ասանէթայ, ի վերայ ե-
րեսաց իւրեանց յերկրի: Եւ մտին առ Յա-
կոբ, և տեսին նստեալ ՚ի վերայ մահճաց
իւրոց: Եւ էր ինքն ալեւոր և ծերացեալ
յոյժ: Եւ ՚ի տեսանելն զնա Ասանէթայ՝
զարհուրեցաւ ունն նորա: Վասն զի էր
Յակոբ բարի տեսեամբ և ձերունի, և ծե-
րութիւն որպէս զառն մանկան՝ յոյժ գեղե-
ցիկ երիտասարդի: և զլուխ նորա ամե-
նէին սպիտակ իրբն զծիւն, և հեր գլխոյ
նորա գանգուր յար ՚ի զլուխն և խիտ յոյժ
իբրև զառն հնդկի, և մորուսն՝ սպիտակ
և վայելիչ՝ նստեալ ՚ի վերայ լանջացն նո-
րա, և աչք նորա խանդապողիչ և փայ-
լուն և գեղեցիկ, և լանջք նորա և ուսքն և
բազուկքն և մատուներ ձեռաց նորա իրբն
զհրեշտակի զօրաւոր, և բորձք նորա և սը-
րունք նորա որպէս զհսկայի: և օյնպէս ե-
րևէր այրն Յակոբ՝ որպէս թէ կուրիցի որ
ընդ Աստուծոյ: Եւ ետես զնա Ասանէթ և
զարհուրեցաւ, և երկիր եպագ նմա ՚ի վե-
րայ երեսաց իւրոց յերկրի: Եւ ասէ Յակոբ
ցՅովսէփ: Այս է հարսն իմ՝ կին քո. օր-
հնեալ եղիցի սա Աստուծոյ բարձրելոյն: Եւ
կոչեաց զնա առ ինքն, համբուրեաց զնա և
օրհնեաց: Ձգեաց և Ասանէթ զձեռս իւր,
և կալաւ զպարանոցէն Յովսէփայ, և կախե-
ցաւ զուսովք հօր իւրոյ, որպէս որ յորժամ
՚ի պատերազմէ ապրեցեալ եկեսցէ ՚ի
տուն: Եւ յետ այսորիկ կերան և արբին.
և զնացին Յովսէփ և Ասանէթ ՚ի տունս
իւրեանց: Եւ յուղարկեցին զնա եղբարքն
Յովսէփայ որդիքն իխայ միայն. բայց որ-
դիքն Զևւիայ և Բալլայի՝ յաղախնոյն իխայ

և Ռաբբէի, ոչ ուղարկեցին զնա ընդ նոսա,
վասն զի նախանձէին և թշնամիք էին նոցա:
Եւ էր Ղէի յաջմէ կողմանէն Ասանէթայ,
և Յովսէփ ՚ի ձախմէ կողմանէ նորա: և էր
Ասանէթայ կալեալ զձեռանէն Ղէեայ: և
սիրէր Ասանէթ զՂէի քան զամենայն եղ-
բարսն Յովսէփայ, վասն զի գիտէր Ղէի
զանճառսն Բարձրելոյն, և յայտնէր զամե-
նայն Ասանէթայ գաղտնի բանիւք: և Ղէի
սիրէր զԱսանէթ յոյժ, և տեսանէր զտեղի
հանգստեաննորա՝ ի բարձունս, և պարիսպ
նորա որպէս զպարիսպ անդամանդեայս, և
զհիմունս վիմի երկրորդ երկնից: Եւ եղև
՚ի գայն Յովսէփայ և Ասանէթայ, ետես
զնա տնդրանիկ որդին Փարաւոնի՝ ի պարզու-
պէն, և զղլայաւ և թշուառացաւ ծանրու-
թեամբ, և զշարէր ՚ի վերայ գեղեցկու-
թեանն Ասանէթայ, և ասէր: Ոչ այդպէս
եղիցի: Առաքեաց Հրեշտակս որդին Փա-
րաւոնի, և կոչեաց ևս ինքն զՄեառն և
զՂէի: և եկին կացին առաջի նորա: Եւ ա-
սէ ցնոսա որդին Փարաւոնի՝ անդրանիկն.
Ճանաչեմ ես այսօր, զի դուք էք արք հօր
քան զամենայն մարդիկ՝ որ են ՚ի վերայ եր-
կրի, և յաջոյ ՚ի ձեր յայդոցիկ երկուց ա-
ւերեցաւ բազուքն Աիկիմացւոյ, և յերկուս
աւուրս յայոյ ձեր յայդոցիկ կոտորեցան լի-
որանց պատերազմողաց: Եւ ահա առից
զձեզ որպէս զընկերս, և տաց ձեզ ոսկի
և ծառայս և աղախնեայս և տունս և վի-
ճակս միժամեծս և բարիս: Բայց ստկայն
ղբանս զայս արարէք, և ընդ իս արարէք
ողորմութիւն: Վասն զի թշնամանեցայ ես
առնարար յեղբօրէն ձերմէ Յովսէփայ,
վասն զի առ զԱսանէթ զկինն իմ, զոր ինձ
է խօսեցեալ զի սկզբանէ: Եւ այժմ եկաք
կռուեցաբար: Ընդ Յովսէփայ եղբոր ձե-
րում: և սպանանեմ զնա սրով իմով, և
տունում զԱսանէթ ինձ ՚ի կնութիւն: և
դուք եղիցիք ինձ յեղբարս և սիրելիս հա-
ւատարիմս: Բայց զբանս զայս դուք ինձ ա-
րարէք: Իսկ եթէ դուք զանդադիցէք, և ա-
ռեալ զբանս զայստոսիկ և արհամարհիցէք
զխորհրդովք իմովք, ահա սուր իմ պատ-
րաստ է առ ձեզ: Եւ մինչդեռ զայս ասէր,

մերկացոյց զսուր իւր և եցոյց նոցա։ Եւ իբրև լուսն զրանս զայստսիկ արքն Շմաւոն և Ղևի, և զլջոցան յոյծ, վասն զի ձեռով գոռոզի խօսեցաւ ընդ նոսա որդին փարաւոնի։ Եւ էր Շմաւոն այր յանդուգն և համարձակ, և խորհեցաւ արկանել զձեռն իւր ՚ի դաստակն սրոյ իւրոյ, և ձգեալ զնա ՚ի պատենից իւրոց, և սպանանել զորդիսն փարաւոնի, վասն զի խտտութեամբ խօսեցաւ ընդ նոսա։ Եւ ետես Ղևի զխորհուրդս սրտի նորա. և զի էր Ղևի այր մարգարէ, և տեսանէր սրբութեամբ մտաց իւրոց, և ուշքով ի բովբէ կարգայր զգրեալսն ՚ի սիրտ մարդոյն. և կոխեաց ոտամբն իւր առ այլոց զտուն նորա, և նեղեաց զնա, և նշանակեաց գաղարկել նմա ՚ի բարկութենէ իւրմէ. և ասէ Ղևի հեղաբար ցՇմաւոն. Ընդէր զու բարկութեամբ ցասեալար ՚ի վերայ առնս սյտորիկ. և մեք արք աստուածապաշտք, և ոչ վայելէ մեզ՝ նմա հատուցանել չար փոխանակ չարի։ Եւ ասէ Ղևի ցորդին փարաւոնի հանդերձ համարձակութեամբ. և բարկութիւն ոչ գոյր ՚ի նմա, և ոչ սակաւ մի ՚ի հեղութեան սրտի նորա, և ասէ ցնա. Ընդէր խօսի տէր մեր ըստ բանիցս ոյսոցիկ և մեք եմք աստուածապաշտք, և հայր մեր սիրելի է Աստուծոյ բարձրելոյ, և Յովսէփ եղբայրն մեր սիրելի է Աստուծոյ։ Արդ, զիարգ արասցուք մեք զբանդ զայդ չար, և մեղանշխիքիք առաջի Աստուծոյ մերոյ, և առաջի հօրս մերոյ Յակոբայ, և առաջի եղբօր մերոյ Յովսէփայ։ Եւ այժմ՝ լուր բանից իմոց. ոչ վայելէ առն աստուածապաշտի զրկել զամենայն որ ըստ ամենայն օրինակի. իսկ թէ որ կամի զրկել զայր աստուածապաշտ, վասն զի սուր է ՚ի ձեռն նորա. և զու պահէ՛ այժմ խօսել վասն եղբօր մերոյ Յովսէփայ ըստ բանիցս այստցիկ, իսկ եթէ զու մնաս ՚ի չարի խորհրդորհանդ այդմիկ, ահա սուրբ մեր հանեալ են ՚ի յայնչ ձեռս մեր՝ վասն քո։ Եւ ձգեցին զսուրսն իւրեանց արքն Շմաւոն և Ղևի՝ ՚ի պատենից իւրեանց, և ասեն. Ահա տեսեր զսուրս զայս ՚ի ձեռս մեր. սուրբ՝ որով խնդրեաց Տէր զվրէժ և զթնամանս ՚ի Արկիմացոյն, որով թնամանեցին զորդիսն իարայելի՝ վասն թեռ մերոյ ՚ի նայի, զոր պղծեաց Արիքեմ որդին Շմաւայր. — Ետես որդին փարաւոնի զսուրսն երկայայր, և յոյծ զողաց ամենայն ոսկերք նորա. վասն

զի փայլէին սուրբն որպէս զրոց հրոյ. և շլացան տէք որդւոյն փարաւոնի, և ասեալաւ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր. — Եւ ձգեաց Ղևի զձեռն իւր և կալաւ զնա, և ասէ ցնա. Արի և մի երկնչիւր, բոյց պահեալ զքեզ՝ զի մի ևս խօսեցայ յաղագս Յովսէփայ եղբօր մերում՝ քան չար։ Եւ եւրին յերեսաց փարաւոնի որդւոյն Շմաւոն և Ղևի, Եւ էր որդի փարաւոնի լի ահիւ և տրտմութեամբ. վասն զի երկնչէր յերեսաց Շմաւոնի. Եւ եղև զի ծանրանայր ՚ի գեղոյն Աստենթայ, և տրտմէր ՚ի տրտմութիւն մեծ՝ առաւել քան զչարին։ Եւ խօսեցան ծառայքն նորա յականջս նորա և ասեն. Ահա որդիք Բաղայ և որդիքն Չեբիայ աղախնոյն Յակոբայ թշնամի են ընդ Յովսէփայ և ընդ Աստենթայ, և նախանձին ընդ նոսա. և եղիցին նոքա ձեռամբ քով ըստ կամաց քոց. Եւ առաքեաց որդին փարաւոնի հրեշտակս, և կոչեաց զնոսա առ ինքն. և եկին առ նա ՚ի ժամ գիշերոյն, և կացին առաջի նորա։ Եւ ասէ ցնոսա որդին փարաւոնի. Բանք իմ են ընդ ձեզ, վասն զի դուք էք արք զօրաւորք։ Եւ ասեն ցնա Դան և Փաղ երից եղբարցն. Խօսեսցի այժմ տէր մեր, և լուիցուք ծառայք քո, և արասցուք ըստ կամաց քոց. Եւ խնդաց որդին փարաւոնի ինդութիւն մեծ, և ասէ ցծառայս իւր. Ի բաց կացէք յինէն ամենեքեան սակաւ մի. վասն զի բանք իմ են գաղտնիք ընդ արքոց ընդ այդոսիկ. և ՚ի բաց կացին ամենեքին։ Եւ ասէ ցնոսա որդին փարաւոնի. Ահա օրհնութիւն և մահ առաջի աշաց ձերոց. առէք առաւել զօրհնութիւն քան զմահ, վասն զի դուք արք զօրաւոր էք, և ոչ մեռանիք որպէս զկանայս. վասն զի լուայ ես ՚ի Յովսէփայ եղբօրէն ձերմէ, զի ասէր ցփարաւոն ցհայրս իմ յաղագս ձեր՝ եթէ որդիք աղախնեաց մօր իմոյ են և ոչ են եղբարք իմ, և անսամ մահուան հօր իմոյ, և խորտակեցից զնոսա և զաղզս նոցա՝ մի՛ գուցէ ծառանգեցնին ընդ մեզ. վասն զի որդիք աղախնեաց են, և գորա են որ վաճառեցին զիս իսմայելացոցն. և ես հատուցից նոցա ըստ ամենայն չարեացն զոր չարացան ՚ի վերայ իմ. միայն մեռցի հայր իմ. Եւ զովեաց զնա փարաւոն հայր իմ և ասէ. Բարի ասացեր. արդ առ յինէն արս հազարս ՚ի պատերազմս, և ես կեղց քեզ օգնականս։ — Եւ իբրև լուսն արքն

զբանս որդւոյ փարաւոնի՝ խռովեցան յոթ
և տրոմեցան, և ասնն ցորդին փարաւո-
նի. Ալաշեմբ դքեզ, տէր, զի օգնեսցես
մեզ. և նա ասէ. Ես եղէջ ձեզ օգնական,
եթէ լուիջիք ինձ. և ասնն. Մեք եմք ծա-
ռալք քո առաջի քո. հրաման տուր մեզ
և արասցուք ըստ կամաց քոց: Եւ ասէ ցնո-
սա որդին փարաւոնի. Ես սպանանմ զհայ-
րն իմ յայսմ գիշերին, վասն զի փարաւոն
է հայր Յովսէփայ. արդ օգնեսցէ ինքեան
առաջի ձեր, և դուք սպանէք զՅովսէփ. և
առից զԱսանէթ ինձ 'ի կնութեան. և դուք
և եղբարք ձեր եղիջիք ինձ ժառանգակիցք.
բայց սակայն զբանս զայս արարէք: Եւ ա-
սնն ցնա Դան և Գադ. Մեք եմք ծառայ-
քո այսօր, և արասցուք զոր ինչ և հրա-
մայեցեր մեզ. և մեք լուաք այսօր 'ի Յով-
սէփայ, զի ասէր ցԱսանէթ. Գնա վաղիւն
'ի ժառանգութիւն մեր, զի ժամանակ է
կթոյ, Եւ ետ նմա արս վեց հարիւրս՝ զօրա-
ւորս 'ի պատերազմի, և յիսուն այր յա-
ռաջնեթացս: Եւ այժմ լուր մեզ, և խօսես-
ցուք ընդ քեզ: Եւ խօսեցան ընդ նմա գաղտ-
նի բանս. և ետ որդին փարաւոնի չորից
եղբարցն՝ առ այր իւրաքանչիւր քմ այր,
և զնոսա կացոյց իշխանս և առաջնորդս:
Եւ ասնն ցնոսա Դան և Գադ. Մեք գնաս-
ցուք 'ի գիշերին, և դարանակալ լիցուք 'ի
ճանապարհին, և թագիցուք 'ի հիւթս եղե-
գանս. և դու առ քեզ յիսուն այր աղեղ-
նաւոր՝ ձիով հանդերձ և գնա 'ի Հեռուստ.
եկեսցէ Ասանէթ և անկանի 'ի ձեռս մեր.
և մեք կոտորեսցուք զգօրսն՝ որ ընդ նմա
իցեն, և փախչի Ասանէթ առաջի կառացն,
և անկանի 'ի ձեռս քո, և արասցես նմա
որպէս ցանկանայ անձն քո. և յետ այսո-
րիկ սպանանեմք զՅովսէփ, մինչդեռ տըրտ-
մեալ է վասն Ասանեթայ. և զորդիսն նորա
սպանանեմք առաջի աշաց նորա:— Եւ խըն-
դաց որդին փարաւոնի իբրև լուաւ զբանս
նոցա, և առաքեաց գնոսա Բժ արանց զի-
նուորաց ընդ նոսա: Եւ եկին 'ի Հեղեղատն,
և թագեան 'ի մէջ հիւթոց եղեգանն. և
նստան յանցն Հեղեղատին աստի և անտի,
և 'ի միջի նոցա ճանապարհ լայն և ընդ-
արձակ. — Եւ յարեաւ որդին փարաւոնի՝ ի
գիշերին յայնմիկ, և եկն 'ի տուն հօր իւրոյ՝
զի սպանցէ գնա արով զհայրն իւր: Եւ պա-
հապանք հօր նորա արգելին զնա մտանել
առ հայր իւր, և ասնն ցնա. Զինչ մտաննս,

տէր: Եւ ասէ ցնոսա որդին փարաւոնի. Զի
տեսից զհայր իմ. և երթամ կթել զայգին
զնորատունին: Եւ ասնն ցնա պահապանքն.
Գլուխն ցաւեցաւ հօրն քո, և արթուն ե-
կաց զամենայն գիշերս, և այժմ դադարե-
ցաւ սակաւ մի. և ասաց հայրն քո. Մի՛ ոք
մերձենայ առ իս— Եւ գնաց որդին փարա-
ւոնի և առ զօրս իւր, և 'ի լուսանալն եղև
դարանակալ. — Եւ ահա դայր Ասանէթ կա-
ռօքն և զօրքն առաջի և զկնի: Եւ 'ի յար-
ձակել թշնամեացն՝ Դան և Գադ և որդին
փարաւոնի յարձակեցան 'ի վերայ նոցա. և
ետես Ասանէթ, և կարդաց առ Աստուած
բարձրեալն: Եւ ահա այրն Աստուծոյ՝ որ ե-
կեալ էր առ Ասանէթ՝ երևեցաւ, և Տէր
պաշտպան եղև նմա. և Զարդեցան սուրբ
նոցա, և ամենայն պատերազմունք հալե-
ցան, որպէս զմիմ առաջի հրոյ. և անկաւ
որդին փարաւոնի՝ 'ի յերկիր առաջի Ասա-
նեթայ, և կործանեցաւ և եղև նման մի-
ռելոյ. . . :

Եւ Դան և Գադ տեսեալ զի Տէր պատե-
րազմեցաւ երկեան և ասնն. Տէր պատերազ-
մի ընդ մեզ. և անկան առաջի Ասանեթայ,
և ասնն. Տիկին մեր և թագուհի՛ դու ես, և
մեք անօրինեցաք առ քեզ, և Տէր հոտոյց
մեզ ըստ գործոցն մերոց: Եւ աղաչեմք մեք
ծառայքս քո, ողորմեա մեզ և փրկեա ըզ-
մեզ 'ի ձեռաց եղբարցն մերոց. քանզի և
նոքա վրէժխնդիրք թշնամեաց եկին առ
մեզ, և սուրբ նոցա առաջի մեր են: Եւ ա-
ռէ Ասանէթ. Քաջալիցարուք և մի եր-
կընչիք յեղբարցն ձերոց. վասն զի նոքա
են արք երկիւղածք՝ 'ի Տեսունէ, աստուածա-
պաշտք, և ամաչեն յամենայն մարդոյ. եր-
թայք դուք 'ի հիւթոց եղեգանց այդորիկ,
մինչև քաւեցից զնոսա վասն ձեր, և ցա-
ծուցից զբարկութիւն նոցա, վասն զի դուք
մեծապէս համարձակեցարուք, և մի եր-
կընչիք. բայց դուտ արասցէ Տէր ընդ ձեզ:
Եւ փախեան 'ի պուրակս եղեգանն Դան և
Գադ և եղբարք նոցա. — Եւ ահա դային
որդիքն Լիսայի՝ ընթանալով իբրև զերամս
եղջիւրուաց. և էջ Ասանէթ 'ի կառացն իւ-
րոց ծածկելոց և ընկալաւ զնոսա հանդերձ
արտասուօք: Եւ նոքա անկեալ երկիր պա-
գին նմա 'ի վերայ երկրի, և լացին մեծա-
ձայն, և խնդրեցին զեղբարսն իւրեանց: Եւ
ասէ Ասանէթ. Խնդրեցէք դուք զեղբարս
ձեր, և մի առնէք չար՝ փոխանակ չարի.

վասն զի Տէր պաշտպան եղև ինձ 'ի նոցա-
նէ, և ջարդեաց զսուրս նոցա, և հալեցան
'ի վերայ երկրի իբրև զմում առաջի հրոյ:
Եւ է այս բաւական, զի Տէր է պատերազ-
մուղ զպատերազմն. և զուք խնդրեցէք զզ-
նոսա, զի եղբարք ձեր են և արին հօր
ձերոյ խորայեկն: — Եւ ասէ ցնա Հիմաւոն.
Ընդէր տիկին մեր խօսի բարի վասն թշնա-
մեաց մերոց. ոչ, այլ կոտորեսցուք զնոսա
սրովք մերովք. վասն զի նոքա խորհեցան
յաղագս ձեր և հօրն մերոյ խորայեկի, և
վասն եղբօր մերոյ Յովսեփայ. սհա այս
երիցս անգամ տիկին մեր և թագուհի դու
ես: — Եւ ձգեաց զձեռն իւր Սասնէթ, կա-
լաւ զմօրուացն նորա և համբուրեաց զնա,
և ասէ ցնա. Մի երբեք զայդ առնես, եղ-
բայր իմ, և չար փոխանակ չարի հատու-
ցանես. Տեսան տացես թշնամութիւն, և
նոքա եղբարք ձեր են, և ծնունդք հօր ձե-
րոյ, և փախեան 'ի Հրէաստանէ՝ յերեսաց
ձերոց: — Եւ մատեաւ առ նա Ղէի, և համ-
բուրեաց զձեռս նորա, և իմացաւ և թէ ապ-
րիցուցանել ի պամի զեղբարս իւրեանց: Եւ
նորա էին 'ի պուրակս հիւրժող եղեգանն.
և ծնողացն և եղբարցն նոցա. ոչ ծանոյց
զնոսա, քանզի երկեաւ մի գուցէ բարկու-

թեամբ իւրեանց սպանանիցեն: — Եւ որդին
փորսւմնի յարեաւ յերկրէ և նստաւ. և
խաղայր արինն ընդ ականջս և ընդ բե-
րանն նորա: Եւ ընթացաւ առ նա Բենիա-
մին, և առ զսուսերն նորա, և ձգեաց 'ի
պատենից իւրոց, և կամէր սպանանել զնա՝
'ի հարկանել 'ի լանջմն որդւոյն փարսու-
նի: — Եւ իրթնացաւ առ նա Ղէի, և կալաւ
զձեռանէ նորա և ասէ. Եղբայր իմ, մի առ-
նիր զգործս զայդ սրիկ. վասն զի մեք եմք աս-
տուածապաշտք, և ոչ վայելէ աստուածա-
պաշտի հատուցանել շար փոխանակ չարի.
և ոչ ումեք՝ անկելոյ 'ի ձեռս ուրուք կոխել
կամ նեղել զթշնամին՝ մինչև 'ի մահ: Եւ
այժմ գարձո զսուր քո 'ի տեղի իւր. եկ
օգնեա ինձ, և բժշկեսցուք զնա 'ի վիրացն
նորա, և կեցցէ և եղիցի մեր սիրելի. յետ
այսորիկ՝ և փարսուոն է որպէս զհայր մեր:
— Յարոյց Ղէի որդին փարսուոնի, և ջըն-
ջեաց զարինն յերեսաց նորա, և պատեաց
փարսամակաւ զերեսս նորա, և եղ զնա 'ի
վերայ ձիոյն իւրոյ, և տարաւ առ հայր իւր
փարսուոն, և պատմեաց նմա զամենայն
բանս զայսորիկ: — Եւ յարեաւ փարսուոն յա-
թոռոյն, և երկիր եպագ Ղէեայ: Եւ յեր-
րորդում աւուր մեռաւ որդին փարսուոնի:

ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Իտալացի վարժապետն Ոսկար Կըլեյց. ապաքն և
սպայ ծովային զինուորութեան, 'ի Յի փեարուարի,
Միլանո Վիլա-Ռոմի Եւրոպին մէջ խօսեաց զեղեցիկ
ճառ. որ «Կերկայ ժամանակիս Միջբուրժեան (կա-
պեղաբերիկի դրոթիւն) և անոր վերածմանց օգտա-
կարութեանց վրայ՝ զինուորական և նաւական վարչու-
թեանց շրջանին մէջ» 1 — Հառախօսն յետ ցոյցանելու՝
թէ ինչպէս ուսմական ընդհանուր թիւր բարեւում մի
է՝ բազմաց՝ Միջբուրժեան վրայ ունեցած զաղափարն,
որպէս թէ միայն ատենից մէջ խօսումներն 'ի գրի
առնելու նպատակին կը ծառայէ, ուստի և ապաւանդել
անձանց միայն վերապահեալ և օգտաւէտ, կ'անցնի ա-
պացուցանելու՝ թէ օգտակար է այն առհասարակ ամէն
անձի՝ որ կը վերաբերի քաղաքակիրթ ընկերութեան
զաստն, իբրև մատուցած անասական, ուսումնական
և նիւթական բազմազանի ծառայութեամբք, և թէ ինչ-

պէս այս իւր յատկութեանց նեղեանք է՝ ոչ միայն եւ-
րոպական ամէն լեզուաց վերածումս լինելն, այլ և
սոսական, լատինական և չայկական՝ կնի և ազնուա-
կան լեզուաց: — Հառախօսն ընդարձակօրէն կը խօսի
չայկական վերածման մասին, ժանուցանելով նաև եռա-
րա մերձաւոր նշատարակումս: — Կ'անցնի հետև ուրեմն
հառեալու Միջբուրժեան յատկութեանց, նպատակին և
օգտակարութեանց վրայ, յորս մանրամասն մէջ բերե-
լով 'ի մասնաւորի՝ այս վերջի տարբերութեան մէջ 'ի Չաղ-
դիս, 'ի Գերմանիա, յԱւստրիա և յԻտալիա՝ նորա մա-
տուցած ծառայութիւններն ցամաքային և ծովային զի-
նուորութեան մէջ, բազմախօսուան ունեղարաց ծափակա-
րութեամբք կը կնքէ իւր ճառը, սոյն բարեբար արուես-
տին համախաբարկական տարածման համար յայտնած
Ընթմ մազթմաքներով:

Հ. Ա. Թ.